

ԿԵՂԾ ՀԱՅԵՐ.

Երբ Հայ եղբօրդ քաղցած ժամերում
Մի կտոր չոր հաց դուտալ չես ուզում,
Նորա ծարաւից պապակուած լեզուն
Երբ մի բուռն ջրով չես զովացնում,
Եւ երբ խղճափի նորա մերկութիւն
Գէթ ցնցոտիքովդ երբէք չես ծածկում,
Երբ ազգիդ պէսպէս պէտքերի համար
Փակումես հարուստ քակիդ թրան,
Թէկուզ դու այնքան զանձեր ժողովես,
Որ կրեսուիցն էլ զերազանցես,
Հաւատու, որ դու ոչ միայն հայ չես,
Այլ հայ ազգութեան մեծ նախատինը ես,

Ազգի թքանք ես,
Մարդ անուանուելու անզամ արժան չես:

Երբ քո ամմնական անարդ շահերին
Չոհումիս քո Ազգն ու Եկեղեցին,
Երբ քո սրտի մէջ մարմնոյ համոյքնիր
Խեղդել են ամին ազնիւ զգացմունքներ,
Երբ մատոնայի սիրով կուրացած՝
Օտարաց օգտին դու դործիք դարձած՝
Չես խղճանարփում քո ծեռքով քանդել
Քո ազգի տունը, եւ երբ քո եղրաց
Տղիտութիւնից օգուտ քաղելով,
Քո կեղծ, ռունալից, քաղցր խօսքերով
Խուսմես նրանց խրեանց պապերից
Մտացած սուրբ կրօնի եւ Ազգի ծոցից.

Եւ վերջապէս, երբ չարն իրեն բարի
Ռեսուցանել խեղճ, տղէտ ամբոխին
Դու նպատակ ես արել քո կեանքին,
Թէկուզ դու հրան զրնս, քարոզես
Եւ քեզ ազգասէր ծեւացնել ուզես,
Հաւատու, որ դու ոչ Թէ ազգասէր՝

Ա. Արծաթասէր

Մատնիչ Վասակ ես:

Հայ անուանն անզամ դու արժանի չես:

Երբ դու անտեղեակ քո ազգի կեանքին
Եւ նորա պաշտած ամբիծ կրօնքին,
Համարձակվումես ևնել նրապարակ
Եւ նոցա շահուց ծեւանալ պաշտպան:
Երբ անբարեմիտ մարդկանց ծեռքերում
Խաղակիք դարձած՝ անմեղ սրտերում
Երկպառակութեան որումն ես ցանում,
Եւ պարզամտները զայթակղեցնում.
Եւ վերջապէս երբ քո Թիւր ընթացրով
Ցոնք շինելու տեղ աչքն էլ ես հանում,
Թէկուզ դու այնքան փիփոփայ լինես,
Որ Առկրատէսիցն էլ զերազանցես,
Հաւատու, որ դու հարազատութեամբ
Ազգիդ ծառայել տնընդունակ ես.

Եւ կամ յայտնապէս

Վարժիւն ՀՀ-է ես

Որովհացան ես:

Ա. Վ.

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

ԵԶՆԻԿԻ ՔԱՀԱՆԱՑԻ ՀԱՅՆԱԳԲԵԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ:

Ձեռքս անցնելով բարեկրօն Եղնիկ քահանայի աշխատասիրած և Մայր
Աթոռոյս տպարանում տպեալ Զայնազքեալ մանկական երգարանը, ա-
ւելորդ չհամարեցինք մի քանի նկատողութիւններ անել տպուած երգերի
և նոցա ձայների վերաց:

Արովչետեւ առաջին անգամն է որ մեր մէջ լոյս է տեսնում տպա-
զրուած ձայնագրեալ մանկական երգերի մի ժողովածու, որը ընդհան-
րանալուց զինի, անկարծիք մեր զպրոցներում իրբէ ձեռնարկ պիտի ծա-